600.0403.08.10.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 հոկտեմբերի 2007 թվականի №403Ա
քաղ. Երևան

«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 8-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ժդ) ենթակետը, 3-րդ կետը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 10-րդ, 17-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի «Ռադիոհաճախականություն-ների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» №28Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2007 թվականի սեպտեմբերի 20-ի №01-11/3344 և 2007 թվականի սեպտեմբերի 28-ի №01-11/3426 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Հայաստանի Հանրապետությունում ռադիոկապի ցանցի (շարժական) կազմակերպման համար 2125-2140ՄՀg/1935-1950ՄՀg հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածների օգտա-գործման թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով:

2. Հաստատել «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում ռադիոկապի ցանցի (շարժական) կազմակերպման համար

2125-2140ՄՀց/1935-1950ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախակա-նությունների հատվածների օգտագործման թույլտվության պայմանները (հավելված):

3. «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 6 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆ

ք. Երևան
8 հոկտեմբերի 2007թ.
ժամը 16^{00}